Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1360-22.05.2026-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 142-րդ հոդվածի վերնագրում «Աշխատաժամանակի ռեժիմը» բառերը փոխարինել «Աշխատանքի գրաֆիկը» բառերով:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել նոր 207.1-ին հոդվածով.

«**Հոդված 207.1. Ծնողական ժամ**

1. Ծնողական ժամ տրամադրվում է աշխատող ծնողին՝ երեխայի խնամքի, դաստիարակության, կրթական գործընթացներին մասնակցության կամ երեխայի շահերից բխող այլ պարտականությունների իրականացման նպատակով: Աշխատող ծնողը (խնամատար ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը) իրավունք ունի օգտվելու ծնողական ժամից՝ բացակայելով աշխատանքի վայրից:

2. Ծնողական ժամը տրամադրվում է՝

1) մինչև տասներկու տարեկան մինչև երկու երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը 30 րոպե.

2) մինչև տասներկու տարեկան երեք և ավելի երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը 1 ժամ.

3) մինչև 18 տարեկան՝ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակումով երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը 1 ժամ (անկախ երեխաների թվից):

3. Ծնողական ժամը տրամադրվում է աշխատողի գրավոր դիմումի հիման վրա, և գործատուն չի կարող մերժել:

4. Ծնողական ժամը ներառվում է աշխատաժամանակում, և այդ ժամանակահատվածում պահպանվում է աշխատողի հիմնական աշխատավարձը (գործավարձով վարձատրվող աշխատողների դեպքում՝ միջին աշխատավարձ, բացառությամբ պարգևատրման գումարների)։»։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1360-22.05.2026-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 142-րդ հոդվածի վերնագրում «Աշխատաժամանակի ռեժիմը» բառերը փոխարինել «Աշխատանքի գրաֆիկը» բառերով:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել նոր 207.1-ին հոդվածով.

«**Հոդված 207.1. Ծնողական ժամ**

1. Ծնողական ժամ տրամադրվում է աշխատող ծնողին՝ երեխայի խնամքի, դաստիարակության, կրթական գործընթացներին մասնակցության կամ երեխայի շահերից բխող այլ պարտականությունների իրականացման նպատակով: Աշխատող ծնողը (խնամատար ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը) իրավունք ունի օգտվելու ծնողական ժամից՝ բացակայելով աշխատանքի վայրից:

~~1. Խնամքին մինչև տասներկու տարեկան երեխա ունեցող, ինչպես նաև մինչև տասնութ տարեկան՝ հաշմանդամության խորը կամ ծանր սահմանափակումով երեխա ունեցող ծնողը (խնամատար ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը) իրավունք ունի օգտվելու ծնողական ժամից՝ բացակայելով աշխատանքի վայրից:~~

2. Ծնողական ժամը տրամադրվում է՝

1) մինչև տասներկու տարեկան մինչև երկու երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը 30 րոպե.

2) մինչև տասներկու տարեկան երեք և ավելի երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը 1 ժամ.

3) մինչև 18 տարեկան՝ ֆունկցիոնալության ծանր կամ խորը~~հաշմանդամության խորը կամ ծանր~~ սահմանափակումով երեխա ունեցող ծնողին (խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝ իր ցանկությամբ՝ օրական առավելագույնը 1 ժամ (անկախ երեխաների թվից):

3. Ծնողական ժամը տրամադրվում է աշխատողի գրավոր դիմումի հիման վրա, և գործատուն չի կարող մերժել:

4. Ծնողական ժամը ներառվում է աշխատաժամանակում, և այդ ժամանակահատվածում պահպանվում է աշխատողի հիմնական աշխատավարձը (գործավարձով վարձատրվող աշխատողների դեպքում՝ միջին աշխատավարձ, բացառությամբ պարգևատրման գումարների):»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1360-22.05.2026-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով ՀՀ աշխատանքային օրենսգրքում նոր լրացվող 207.1-ին հոդվածի՝ 1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Ծնողական ժամ տրամադրվում է աշխատող ծնողին՝ երեխայի խնամքի, դաստիարակության, կրթական գործընթացներին մասնակցության կամ երեխայի շահերից բխող այլ պարտականությունների իրականացման նպատակով:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները և լրացումները:	**Ընդունվել է:**

			Աշխատող ծնողը (խնամատար ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը) իրավունք ունի օգտվելու ծնողական ժամից՝ բացակայելով աշխատանքի վայրից։»: Առաջարկվող ձևակերպումը նպատակ ունի ավելի հստակ սահմանել «ծնողական ժամ» եզրույթը: 2) 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում համապատասխանաբար «մինչև երկու երեխա» և «երեք և ավելի երեխա» բառերից առաջ լրացնել «մինչև տասներկու տարեկան» բառերը, իսկ «(խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝» բառերից հետո լրացնել «իր ցանկությամբ՝» բառերը: Առաջարկը ներկայացվում է		

			վերը նշված 1-ին կետով կատարվող փոփոխությամբ պայմանավորված, ինչպես նաև հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով: 3) 2-րդ մասի 3-րդ կետում՝ «հաշմանդամության խորը կամ ծանր» բառերը փոխարինել «ֆունկցիոնալության ծանր կամ խորը» բառերով, իսկ «(խնամատար ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին)՝» բառերից հետո լրացնել «իր ցանկությամբ՝» բառերը: Առաջարկը ներկայացվում է եզրույթների համապատասխանեցման, ինչպես նաև հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով: 4) 3-րդ մասում «դիմումի		

			հիման վրա» բառերից հետո լրացնել «, և գործատուն չի կարող մերժել» բառերը՝ հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով:		